ցինք, որովհետեւ հեղինակին բուն նպա-
տակն էր և երեւցաւ՝ Ղփտեայց վրայ տե-
ղեկութիւն տալ, ի մէջ բերինք անոնց
մարդաթուոյ համար գրածն այլ, թէ և
իրմէ չորս հինգ դար առաջուան վիճակին,
այսինքն Արաբացւոց տիրապետելէն (յա-
մին 640) իբր դար մի ետքը. «Եգիպ-
» տոսի Նուաճման գիրքն كتاب فضائل مصر,
» որոյ հեղինակն է Ալ-Քինտի, պատմէ,
» թէ Ալ-Վայիտ Իպն Զուվաա եկաւ յԵ-
» գիպտոս հարկ ժողուելու, Հիշամ Իպն-
» Աբդլմէլիքի ամիրապետութեան ատեն,
» (720-43 թու. Քրիստոսի), և ժողովուր-
» դեան մարդահամար ընելու, և վեց ամիս
» կեցաւ ի Վերին Եգիպտոս, երեք ամիս ի
» Ստորինն, 10,000 գեղէ աւելի համրեց,
» որոց ամենէն փոքրին մէջ այլ 500 արու
» Ղփտի կար, որով բոլոր (արու) Ղփտեաց
» թիւն էր 5,000,000»։ — Հիմայ այլ ըստ
1877 տարւոյ եղած ազգահամարի, Եգիպ-
տոսի բոլոր բնակիչքն (բաց ի Նուբիոյ)
5,500,000 համարուին. յորս քրիստոնեայ
Ղփտիք իբր կէս միլիոն, իսկ Ֆէլլահք
(կամ Ֆէլլահինք) որ են արաբախօս և մահ-
մէտական Ղփտիք՝ 4,500,000. Ֆեացեալքն
են Պեռէվիք 300,000, Թուրքք 10,000,
Նոյնքան և Հայք, Հրեայք 20,000, Եթով-
պացիք, Նուբիք, Սուտանցիք 43,000, Ասո-